ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/114

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11017-2019 գրությամբ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/975-2019 գրության հիման վրա, 02.07.2019թ. թիվ 26/26-1/11017-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/114 ընթացակարգի շրջանակներում 11.07.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/975-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինանյութի և տնտեսական ապրանքների» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հայտ էին ներկայացրել թվով 32 մասնակիցներ, այդ թվում՝ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն:

«Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ «Վագ Իիմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություն-ներ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 47-րդ կետը՝

հանձնաժողովը 11.06.2019թ. կայացած նիստում որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը, որի քննարկման ժամանակ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերում նույնպես առկա են անհամապատասխանություններ՝ այսինքն չեն շտկվել պահանջված անհամապատասխանությունները (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի պահանջները, որոշել է մերժել «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/114 ընթացակարգի շրջանակներում 11.07.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է

որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 11.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 11 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին չհամապատասխանելու հիմքով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11017-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/975-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի

«զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում

մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն:

Ընկերության գնային առաջարկն Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով կազմել է 7 200 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և որակավորման չափանիշները հիմնավորող

հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն: Մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված 16.12.2015թ. թիվ ԳՄՆԱՊՍԻ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/1 ծածկագրով պայմանագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պահանջներին, ըստ որի մասնակիցը նմանատիպ պայմանագիրը պետք է պատշաճ ձևով իրականացրած լինի հայտը ներկայացնելու տարվա (2019) և դրան նախորդող երեք տարվա ընթացքում (2016, 2017, 2018), այնինչ Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը կնքված է 16.12.2015թ. և կատարված նույն ամսում:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորելու համար ներկայացված 30.05.2018թ. կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/167-1 ծածկագրով գնման պայմանագրին կից ներկայացված՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընունման արձանագրությունների ընդհանուր գումարը ավելի քիչ էր, քան պայմանագրով նշված գումարն էր: 10.01.2017թ. կնքված թիվ ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/38-14 ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 2 937 000 ՀՀ դրամ, 07.09.2017թ. պայմանագրին կից կնքվել է պայմանագրի ծավալի ավելացման համաձայնագիր N 1, ըստ որի պայմանագրի գնին ավելացվել է ևս 581 000 ՀՀ դրամի չափով և վերը նշված պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 3 518 000 ՀՀ դրամ, ներկայացված պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար հավաստող հաշիվ-ապրանքագրի ընդհանուր գումարն ավելին է, քան պայմանագրի ընդհանուր գումարը, իսկ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝

պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությունների ընդհանուր գինը պակաս է պայմանագրի ընդհանուր գնից:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին չհամապատասխանելու հիմքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 12 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կատարվել է Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի ուսումնասիրություն և պարզվել, որ հանձնաժողովի քարտուղարի կողմից «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցված (forward) էլեկտրոնային փոստում առկա էր Ընկերության կողմից ներկայացված հղում, որը պարունակում է մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթուղթ, որը հանձնաժողովի կողմից չէր նկատվել և չէր քննարկվել, ուստի հանձնաժողովը որոշել է գնահատել նաև տվյալ հղմամբ ներկայացված 10.01.2017թ. թիվ ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/38-15 ծածկագրով պայմանագիրը, սակայն գնահատման արդյունքում պարզվել է, որ տվյալ պայմանագրին կից չեն ներկայացվել համապատասխան հաշիվ-ապրանքագրերը:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 11 արձանագրությամբ կայացված՝ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը թողնել անփոփոխ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել

հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող մասնագիտական փորձառություն:

Նույն կետի 2.5 ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 1-ին, 6-րդ, 12-րդ և 21-րդ չափաբաժինների մասով տնտեսական ապրանքների, իսկ մնացած չափաբաժինների մասով՝ շինանյութերի մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-

ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես շտկված փաստաթուղթ ներկայացվել է՝

- «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 30.05.2018թ. կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/167-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմել է 4 059 492 ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ Ընկերության կողմից ներկայացվել են 4 059 494,4 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրեր, ինչպես նաև կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքված հանձնման - ընդունման արձանագրություն-ները, որոնց ընդհանուր գումարը (3 268 608 ՀՀ դրամ) սակայն պակաս է պայմանագրով և հաշիվ-ապրանքնագրերով նախատեսված գումարից:

- «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 10.01.2017թ. կնքված ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/38-14 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմել է 2 937 000 ՀՀ դրամ, իսկ կողմերի միջև 07.09.2017թ. կնքված թիվ 1 համաձայնագրի համաձայն՝ պայմանագրի գինը ավելացել է 581 000 ՀՀ դրամով: Ընկերության կողմից ներկայացվել են պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կնքված հանձնման-ընդունման արձանագրությունները, որոնց ընդհանուր գումարը (1 714 350,06 ՀՀ) պակաս է պայմանագրի ընդհանուր գնից և հաշիվ-ապրանքագրերը, որոնց ընդհանուր գումարը գերազանցում է պայմանագրով նախատեսված գինը:

- «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 10.01.2017թ. կնքված ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/38-15 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմել է 4 176 000 ՀՀ դրամ: Ընկերության կողմից ներկայացվել են պայմանագրի հաշիվ-ապրանքագրերը, սակայն չեն ներկայացվել հանձնման-ընդունման արձանագրությունները:

Այսպիսով՝ Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է նախկինում

կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում են առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը բավարարելու մասով ներկայացված հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11017-2019 գրությամբ «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վագ Իմպորտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**